ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՂ ՊՏՂՈՒՆՔ
ՀՎՀՀ 900322235038
ՀԿՀՀ –04701766
ԻՆԴԵՔՍ 1145

ՀԵՌԱԽՈՍ 02316-35-50

РА АРМАВИРСКАЯ
ГУБЕРНЯ СЕЛО ПТГУНК
ИНДЕКС 1145
ТЕЛ.0231 6-35-50
RA THE MARZ OF ARMAVIR
VILAGE PTGHUNK
INDEX 1145

թիվ 01-89 06.07 2011թ.

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն՝ Ա.Ղահրամանյանին

Հարգարժան պարոն մարզպետ.

Ձեզ է ներկայացվում Արմավիրի մարզի Պտղունք համայնքի ղեկավարի 2011թ.-ի հունիս ամսվա ընդունած որոշումը և արձակած կարգադրությունը:

Առդիր՝ 3 էջ:

Պտղունք համայնքի ղեկավար՝ /Ս.Ձեյնալյան/

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 6770-11
«11» 07 2011 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«27» Հունիսի 2011թ. թիվ 9

ԿԱՐԱՊԵՏ ԱՐՇԱՎԻՐԻ ԱՐԹԵՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 159-րդ և 161-րդ հոդվածի երկրորդ մասով, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի առաջին մասի բ) ենթակետով, և և հիմք ընդունելով Կարապետ Արշավիրի Արթենյանի 2011 թվականի հունիսի 24-ի դիմումը.

Կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Պտղունք համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար՝ Կարապետ Արշավիրի Արթենյանին տրամադրել 2011 թվականի համար ամենամյա արձակուրդը 2011 թ.-ի հուլիսի 6-ից 24 աշխատանքային օր՝ 20+4, տևողությամբ:
2. Կարապետ Արշավիրի Արթենյանին իր պարտականությունները գերազանց կատարելու համար գյուղապետարանի խրախուսման ֆոնդից պարգևատրել մեկ դրույքաչափով՝ 95000 դրամով:
3. Կարապետ Արշավիրի Արթենյանի բացակայության ժամանակ պարտականությունների կատարումը դնել առաջատար մասնագետ՝ծած.(3.1-4) Հասմիկ Ներսիսյանի վրա:
4. Աշխատանքի մեջ համարել 2011թվականի օգոստոսի 8-ին
5. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Պտղունք համայնքի ղեկավար՝ /Ս. Ձեյնալյան/

2011 թվականի հունիսի «27»
գ.Պտղունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ

«01» հունիսի 2011թ. թիվ 6

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N1- Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետով, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2011 թվականի ապրիլի 6-ի թիվ 1/12/1045-11 գրությունը: Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Պտղունք գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի մայիսի 27-ի թիվ 5 որոշումը

Որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Պտղունք գյուղական համայնքի ղեկավարի 2009 թվականի փետրվարի 24-ի «Համայնքային ծառայության պաշտոնի անձնագրերը հաստատելու մասին» N1-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները:
2. Որոշմամբ հաստատված N 5 հավելվածում « Իրավունքներ և պարտականություններ » բաժինը լրացնել նոր կետերով համաձայն հավելվածի::
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Պտղունք համայնքի ղեկավար՝ /Ս. Ձեյնալյան/

2011 թվականի հունիսի «01»
գ.Պտղունք

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՈՒՆՔԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 1-Ի ԹԻՎ 6 ՈՐՈՇՄԱՆ

ԼՐԱՑՈՒՄ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N1-Ա ՈՐՈՇՄԱՆ

1. Սահմանված կարգով արձանագրում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Պտղունքի գյուղական համայնքի «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողովի նիստերը, կազմում է համապատասխան եզրակացություն և ներկայացնում է համայնքի ղեկավարին:

2. Սահմանված կարգով կազմակերպում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Պտղունքի գյուղական համայնքի «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողովի աշխատանքներին առնչվող փաստաթղթաշրջանառությունը, համապատասխան գրանցամատյանների վարումը և դրանց պահպանումը: